

մասամբ, դուցէ, շնուածական թերութեանց հետեւանքով, ամբակառոյց չէ եղած գժբախտորար Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շէնքը: 1886-էն վերջը, այսինքն շնութենէն չուրջ քառանկակ մը տարի յետոյ, երկու կողմի պատերը վասն-գաւոր դարձած ըլլալով, Մտաթէս Եպիսկոպոս Իզմիրլեանի տաճարգութեան օրով, Յակոբեան Թագւոր Փաշայի ծախ-քով, այդ պատերուն երկու կողմերը չորս քարակուռ վիթ-խարի պահպանակ նեցուկներ հիւսուած են: Իսկ հիմակ, դեռ հարիւրամեակ մը չ'ըրացած, ներսէն և դուրսէն բողմաթիւ կէտերէ խոշոր ճեղքուածքներ դոյրացած են ամբողջ շէնքին վրայ, և մեծածախա նարդութիւն մ'իսկ չ'կրնար երաշխա-ւորել անոր ամբողջիւնը:

